ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՍԵՐԲԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ

(XIX դարի վերջ—XX դարի սկիզբ)

Ա. Ա. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

XIX դարի վերջին—XX դարի սկզբին սերբական մամուլը լայնորեն անդրադարձավ Հայկական հարցին, օսմանյան տիրապետության դեմ ուղղված հայ ազատագրական պայքարին։ Հրապարակվեցին լուրեր, քաղաքական տեսություններ, հրապարակախոսական ելույթներ և այլ նյութեր։ Սերբ հասարակության մեջ Հայկական հարցին առաջիններից մեկն անդրադարձավ ականավոր հասարակական գործիչ, լուսավորիչ, հեղափոխական, 1875—1878 թթ. Բոսնիայի և Հերցեգովինայի հակաթուրքական ապստամբության եռանդուն մասնակից, վարդապետ Վասա Պելագիչը (1838—1899)։ «Բոսնիական-Հերցեգովինյան ապստամբության պատմություն» (1879 թ.) իր ծրագրային աշխատության մեջ նա հայ ժողովրդի ազատագրական ձգտումները միավորում էր բալկանյան ազգերի նույնանման դիրքորոշման հետ, հույս հայտնելով, որ արդարությունը կհաղթանակի և Ռուսաստանի ու Թուրքիայի միջև բաժանված հայկական տարածքներում ի վերջո կստեղծվի հայ անկախ և միացյալ պետություն[1]։

Սերբական լրագրերից և հանդեսներից շատերը բազմիցս հաղորդագրություններ էին տպագրում Հայկական հարցի վերաբերյալ մեծ տերությունների դիվանագետների և թուրքական կառավարության միջև տեղի ունեցող բանակցությունների, Բեռլինի պայմանագրի դրույթների կատարումը թուրքիային պարտադրելու անհրաժեշտության և Հայաստանում անհապաղ բարենորոգումներ իրականացնելու մասին։ «Այն, որ բուլղարները, հույները ու հայերը իրենք են ուզում իրենց կառավարել,—գրում էր 1880 թ. Բելգրադի «Վիդելո» («Լույս») լրագիրը,—դա հասկանալի է, քանի որ բոլոր այս ժողովուրդները ամբողջովին քրիստոնեական են, և թուրքական կեղծ համակարգը չի համապատասխանում նրանց բնավորությանը»[2]։

Սերբական և չերնոգորական պարբերական մամուլում լայն արձագանք գտան 1894—1896 թթ. ողբերգական դեպքերը՝ Արևմտյան Հայաստանի և Կոստանդնուպոլսի հայ բնակչության կոտորածները։ Տարբեր քաղաքական կուսակցությունների և հոսանքների պարբերականները միմյանց հետ համերաշխ էին սուլթանական կառավարության հակամարդկային գործողությունների դատապարտման խնդրում։ «Եթե Թուրքիան չգործադրի բոլոր հնարավոր միջոցները մեղավորներին խստորեն պատժելու համար,—Սասունի դեպքերի առիթով գրում էր Նովի Սադի «Բրանիկ» («Պաշտպանություն») լրագիրը,—ապա այս հայկական դեպքերից ամեն տեսակ բան կարող է առաջանալ, և Թուրքիան կարող է մի այնպիսի դաս ստանալ, որն ավելի լավ է ըմբռնելու, քան այն մեկը, որը նրան կարդացել էին Բեռլինի կոնֆերանսի ժամանակ»[3]։ *Նույն լրագրի էջերում 1895 թ. տպագրված «Բարենորոգումները Թուրքիայում» խմբագրական հոդվածի հեղինակը, «Այլաքս» կեղծանվան տակ, խոսելով Թուրքիայում որևէ բարենորոգումներ անցկացնելու անհնարինության մասին, նշում էր. «Ղրիմի պատերազմից և Փարիզի*

---

[1] В. Пелагић. Историја босанско-ерцеговачке буне. Београд, 1882, с. 179—181.

[2] Видело, 1880, № 77, с. 1.

[3] Бранник, 1894, № 140, с. 3.

վեհաժողովից անմիջապես հետո Թուրքիան խոստացավ դավանանքների իրավահավասարություն հաստատել։ Սակայն արդյո՞ք այսօր Թուրքիայի քրիստոնյաները իրավահավասար են «ուղղահավատների» հետ։ Արդյո՞ք նրանց տվեցին որևէ արտոնություն։ Ամեն ինչ մնաց առաջվա պես, և դրանով կարելի է բացատրել այն, որ Թուրքիան կորցնում է իր գավառները մեկը մյուսի հետևից։

Դժվար թե որևէ բան փոխվի նաև Հայաստանի բարենորոգումների կապակցությամբ։ Թուրքիան խոստացավ այդ բարենորոգումները միայն այն փակուղուց դուրս գալու համար, որի մեջ նա հայտնվել է եվրոպական տերությունների ճնշման տակ։ Սակայն դատարկ խոստումներից մինչև իրական գործերը տանող ճանապարհը չափազանց երկար է։ Հենց որ կրքերը հանդարտվեն, Թուրքիան մոռանալու է իր այս բարենորոգումների մասին։ Թուրքիան ընդունակ չէ բարենորոգումների։

Սակայն եթե պաշտոնական Թուրքիան նույնիսկ ուզենար բարենորոգումներ իրականացնել, այդ բանի համար նրա ուժերը չէին բավականացնելու։ Մահմեդական տարրը լի է մոլեռանդությամբ, և ամեն մի զիջումը քրիստոնյաներին Թուրքերը համարում են թուլության նշան, դավաճանություն իսլամի նկատմամբ։ Թուրքիայում տիրում է միջնադարյան ըմբռնում, ըստ որի Թուրքերը երկրի տիրակալներն են, իսկ քրիստոնյաները՝ ծառաներ, որոնք պարտավոր են կռահել և կատարել իրենց տիրոջ կամքը։ Կոստանդնուպոլսում տեղի ունեցած վերջին ընդհարումները ցույց տվեցին, թե որչափ են Թուրքերը գրգռված։ Արդեն թափվել է արյունը, իսկ երբ գործը գրսն է հասնում, դժվար թե կարելի է մտածել, որ Թուրքերը հանգիստ կերպով կընդունեն որևէ հայկական ինքնավարություն։

Միաժամանակ դժվար թե խոստացած բարենորոգումները գոհացնեն նաև հայերին, նույնիսկ այն դեպքում, եթե նրանք բոլորը կիրականացվեն։ Չկա ոչ մի ժողովուրդ, որը կիսազատությամբ բավարարվեր։ Բոլորն էլ ջանում են լրիվ անկախ դառնալ։ Այդպես էր Սերբիայի, Ռումինիայի և Բուլղարիայի պարագայում։ Եթե երբևիցե ստեղծվի հայկական ներքին ինքնավարություն, դա լինելու է առաջին հաջողությունը միայն, որին կհետևի նրանց լիակատար ազատագրումը։

... Հայկական հարցը գեռ շատ երկար է անհանգստացնելու Եվրոպային և լուծվելու է միայն այն ժամանակ, երբ որ Թուրքիան վերանա»[4]։

«Բոսանսկո-Հերցեգովաչկի իստոչնիկը»՝ Բոսնիայում սերբ ուղղափառ եկեղեցու պաշտոնաթերթը, մեկնաբանելով հայերի կոտորածի մասին հաղորդագրությունը, նշում էր, «որ այնքան ժամանակ, մինչև որ Թուրքիայում չի հաստատվելու իրական իրավահավասարություն նաև քրիստոնեական տարրերի համար, դժվար թե խաղաղություն լինի, քանի որ XIX դարը չի հանդուրժում ոչ մի բռնակալություն և հարստահարություն»[5]։ Հայկական հարցին մեծ ուշադրություն էր նվիրում սերբական լավագույն հանդեսներից մեկը՝ Բելգրադի «Դելոն» («Գործ»)։ Լյուբոմիր Յովանովիչի քաղաքական տեսություններում մանրամասն տեղեկություններ էին տրվում Արևմտյան Հայաստանում կատարվելիք բարենորոգումների հարցում մեծ տերությունների միջև ծագած տարաձայնությունների, Թուրքիայի հայ ազգաբնակչության բնաջնջման, Վանի և Զեյթունի հերոսական ինքնապաշտպանության մասին։ «Հենց որ արտաքին ուժերի ճնշման տակ ընդունվեց հայկական բարենորոգումների ծրագիրը,—գրում է սերբ հրապարակախոսը,—բռնկվեց վիրավորված մահմեդական մոլեռանդության ցասումը։ Անատոլիայում բոցկըլտում է քաղաքացիական պատերազմ իր բոլոր սարսափներով և մշակված արևելյան դաժանությամբ... Եվ այն ժամանակ, երբ Հայաստանում անողոքաբար թափում են արյունը, Թուրքական կառավարությունը, հասկանալով իր վիճակի հուսահատությունը և անզորությունը, անվճռականորեն

[4] Браник, 1895, № 122, с. 1.

[5] Босанско-Херцеговачки Источник, Сарајево, 1896, № 9, с. 337—338.

խոնարհվում է մերթ եվրոպական ազդեցության, մերթ մուսուլմանական մոլեռանդության առջև։ «Թուրքիային նախանշված է այն բոլոր նվաճող պետությունների ճակատագիրը,—շարունակում էր հեղինակը,—որտեղ մեկ փոքրաթիվ ժողովուրդ ճնշում է այսքան երկրներ և ժողովուրդներ, և այն էլ ոչ թե հանուն մշակույթի տարածման, այլ որպես յուրաքանչյուր մշակույթի և առաջադիմության թշնամի»[6]։ «Ժամանակակից Թուրքիան ըստ նորադույն հրապարակումների» (1897 թ.) անավարտ անստորագիր հոդվածում, որի հեղինակն էր, ըստ երևույթին, նույն Լ. Յովանովիչը, դատապարտվում էին որոշ թուրք, ֆրանսիացի և գերմանացի պատմաբանների փորձերը՝ արդարացնելու Աբդուլ Համիդի քաղաքականությունը հայերի նկատմամբ. «Եթե թուրքական պետական գործիչները լինեին ավելի շրջահայաց, դժվար թե Հայկական հարցը այնպիսի կերպարանք ընդուներ, որը Եվրոպայում զայրույթի փոթորիկ առաջացրեց։ Զուր էին թուրքերի բարեկամների ջանքերը մեղմացնելու այդ զայրույթը, կատարված ոճրագործությունների մեղքը բարդելով հայ հեղափոխականների վրա։ Նրանք չկարողացան հասնել իրենց նպատակին, և թուրքերը վճարում են իրենց հեղինակությամբ այն վնասի համար, որից նրանք կարող էին խուսափել, եթե հենց սկզբից փորձեին ընդառաջել հայերի արդար պահանջներին և կասեցնել խռովությունները»[7]։ Քննադատելով թուրքերի կրոնի հանդուրժողականության մասին դրույթը, հեղինակը նկատում է, որ «հայերի կոտորածներում... չկար ոչ մի բան, որը համապատասխաներ Ղուրանի պատվիրաններին»[8]։ Հետաքրքրական է, որ դեռևս 1896 թ. ծանոթանալով երիտթուրքերի գործունեության և ծրագրի հետ, Յովանովիչը հանգում է այն եզրակացության, որ նրանց ազգայնամոլ և համաիսլամական ձգտումները ոչնչով չեն տարբերվում սուլթանի քաղաքականությունից։

1902 թ. Սերբիայի խոշորագույն գրական ամսագրի՝ «Սրպսկի կնյիժևնի գլասնիկի» խմբագիր Սվետիսլավ Սիմիչը տեղեկացնում էր իր ընթերցողներին Փարիզում լույս տեսնող «Պրո Արմենիա» ամսագրի հրատարակման մասին։ Սիմիչը նշում էր, որ ամսագրի կոչումն է «Եվրոպային ծանոթացնել Օսմանյան կայսրության մեջ տեղի ունեցող ողբերգական իրադարձությունների և Թուրքիայում իշխող վարչակարգի մասին, որը բոլոր դժբախտությունների պատճառն է։ Հայերի վերջին կոտորածները Թուրքիայում և նրանց այսօրվա անտանելի վիճակը իրենց վրա հրավիրեցին ֆրանսիացի մարդասերների և հասարակական գործիչների ուշադրությունը, որոնք կարեկցանքով համակվեցին այդ քրիստոնյա ժողովրդի ողբերգական ճակատագրի հանդեպ»[9]։ Հեղինակը համոզված էր, որ իր հայրենակիցները ակտիվորեն կաշխատակցեն ամսագրին, որը նյութեր էր հրատարակում ոչ միայն հայերի նկատմամբ գործած ոճրագործությունների, այլև թուրքական լծի տակ գտնվող Հին Սերբիայի, Մակեդոնիայի և Ալբանիայի քրիստոնյաների թշվառ վիճակի մասին։

«Այն փտած երկրից, որից լեշահոտ է գալիս, դարձյալ լուրեր են հասնում քրիստոնյաների ջարդերի մասին,—գրում էր 1905 թ. օգոստոսին «Պոլիտիկա» օրաթերթը։—Այն, ինչ որ այստեղ՝ Եվրոպայում, կատարվում է սերբերի նկատմամբ, այդ նույնը Ասիայում կատարվում է հայերի հետ... Մեր համակրանքը, որպես մի ժողովրդի, որը գտնվում է գրեթե նույն վիճակի մեջ, պետք է լինի հայերի հանդեպ։ Կգա՞, արդյոք, այն ժամանակը, երբ այս դիակը, որի անունն է Օսմանյան կայսրություն, կդադարի մեր օրը պղտորելուց»[10]։

---

6 Дело, 1895, кн. 8, с. 271, 275.
7 Дело, 1897, кн. 14, с. 299.
8 Նույն տեղում, էջ 256։
9 Српски књижевни гласник, 1902, кн. 5, с. 80.
10 Политика, 1905, 15. VIII, с. 1.

Երիտթուրքերի կողմից սանձազերծված հայերի ցեղասպանությունը նորից ալեկոծեց սերբ առաջադեմ հասարակայնությանը, որն իր ձայնը բարձրացրեց ի պաշտպանություն հայ ժողովրդի իրավունքների։ «Սրպսկի կնյիժևնի գլասնիկ» («Սերբական դրական լրաբեր») ամսագրի քաղաքական տեսություններում, որոնք լույս էին տեսնում սերբ ականավոր պատմաբան և դիվանագետ Յովան Մ. Յովանովիչի (1869—1939) ստորագրությամբ, դատապարտվում էին երիտթուրքերի քաղաքական ծրագրերն ու գործողությունները, որոնք ուղղված էին Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդների ոչնչացմանը և որոնց հետևանքն էր Ադանայի ջարդը[11]։ 1912 թ. նույն ամսագիրը հրապարակում է ֆրանսիացի գրող Անատոլ Ֆրանսի երեք կրքոտ ճառերը, որոնք արտասանված էին 1903 թ. գարնանը «Ի պաշտպանություն Հայաստանի և Մակեդոնիայի» կոմիտեի կողմից Փարիզում և Հռոմում կազմակերպված համահավաքներում[12]։ «Նոր վարչակարգի երկու և կես տարվա կառավարման ընթացքում Օսմանյան կայսրությունում տեղի ունեցան այնքան ապստամբություններ, ինչքան չէր եղել նույնիսկ հին վարչակարգի գոյության տասը տարվա ընթացքում,—գրում էր 1911 թ. Սարայևոյի «Պրեգլեդ» («Տեսություն») ամսագիրը հպատակ ժողովուրդների նկատմամբ երիտթուրքերի վարած քաղաքականության մասին։—Ասիական ու եվրոպական Թուրքիայի բոլոր ժողովուրդները, առանց լեզուների և դավանանքների խտրության, դժգոհ են գերակշռող ժողովրդից՝ թուրքերից։ Քրիստոնյա ժողովուրդները՝ քանի որ նրանք զրկված են ազգային ոգով զարգանալու և առաջադիմելու հնարավորությունից, մահմեդականները՝ գրեթե նույն պատճառով։ Բուլղարները, հույները, սերբերը, ճիշտ այնպես, ինչպես արաբներն ու ալբանացիները, ինչպես հրեաները, իրենց կուլտուրական մակարդակով բարձր են թուրքերից... Այս ամենից բացի, գլուխ է բարձրացնում հին կրոնական մոլեռանդությունը, և կրոնական անհանդուրժողության ու թուրքական մեծամոլության կրողները իրենց գործողություններն են սկսում ամեն ոչ-թուրքականի դեմ»[13]։

Սերբ մտավորականության դեմոկրատական շրջանները, և առաջին հերթին սոցիալ-դեմոկրատները, հանդես էին գալիս ի պաշտպանություն Հայկական հարցի արդար լուծման, վերջինիս հետ կապելով թուրքական լծի տակ դեռ մնացած սերբ, բուլղար և ալբան ժողովուրդների մի մասի ազատագրման հարցերը։ Թուրքիայում հալածվող քրիստոնյա ժողովուրդների վիճակին մի քանի հոդվածներ նվիրեցին սերբ սոցիալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդներ Դիմիտրիե Տուցովիչը (1881—1914) և Դուշան Պոպովիչը (1884—1918) «Բորբա» («Պայքար», Բելգրադ) ամսագրում։ «Երիտթուրքերի վարչակարգը Թուրքիայում,—գրում էր Տուցովիչը 1910 թ. «Կախաղանների երկրից» հոդվածում,—իր սարսափներով գերազանցում է ամենադաժան թուրք փաշաների և ռուս նահանգապետների տիրապետությունը։ Մեր համոզմունքով, նման օրինակ չես գտնի մարդկային բռնապետության պատմության մեջ»[14]։ Նա գտնում էր, որ Թուրքիայում տեղի ունեցած ողբերգական դեպքերի գլխավոր մեղավորը եվրոպական կապիտալիզմն է, որը, սեփական շահերից ելնելով, անտեսում է ստրկացած ժողովուրդների ձգտումները. «Արդյոք նրան (եվրոպական կապիտալիզմին—Ա. Հ.) հետաքրքրո՞ւմ են ալբանական խնդիրը, հայերի վիճակը կամ Մակեդոնիայի և Հին Սերբիայի քրիստոնյաների կարիքները»[15]։ Որպես այս եզրակացությունը հաստատող օրինակ Դ. Պոպովիչը բերում է հայկական կոտորածների օրերին ֆրանսիական կառավարության վարքագիծը. ֆրանսիական ռազմանավերի

---

[11] Српски књижевни гласник, 1909, кн. 22, с. 700—703; кн. 23, с. 547—552; 1910, кн. 24, с. 228—229; 1913, кн. 31, с. 475—476.

[12] Српски књижевни гласник, 1912, кн. 29, бр. 9, с. 714—720.

[13] Преглед, 1911, бр. 1—3, с. 129—130.

[14] Борба, 1910, бр. 14, с. 522.

[15] Նույն տեղում։

Թուրքիայի ափերի մոտ ուղարկելու պատճառն էր հանդիսացել ոչ թե 300 հազար անմեղ հայերի ոչնչացումը, այլ 300 հազար թուրքական լիրաները, որոնք սուլթանը հրաժարվել էր վճարել ֆրանսիացի երկու առևտրականներին[16]։ Բալկանյան պատերազմների և առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հրապարակված Պոպովիչի հոդվածներում և ելույթներում թուրք ֆանատիկոսների արյունալի ոճրադործությունները խաղաղ սլավոնական բնակչության նկատմամբ բազմիցս զուգորդվում էին հայկական կոտորածների հետ։ «Թուրքե՛ր, դո՛ւրս Եվրոպայից» հոդվածում, որի մեղմացած տարբերակը տպագրվել է «Ռադնիչկե Նովինե» («Բանվորական թերթ», Բելգրադ) լրագրի էջերում 1912 թ. օգոստոսի 15-ին, նշվում էր. «Հայկական կոտորածները, որոնք 1895 թ. սարսափեցրել էին ողջ կուլտուրական Եվրոպային, նորից կրկնվում են փոքրապատկերով. Ամբողջ տարբերությունը միայն այն է, որ այժմ այս արյունալի իրադարձությունների ասպարեզն է ոչ թե Փոքր Ասիան, այլ Եվրոպան։ Ահա՛ որչափ է «առաջադիմել» Թուրքիան գրեթե երկու տասնամյակների ընթացքում։ Բոլոր այս դեպքերը միայն կրկին հաստատում են հին և փորձված ճշմարտությունը. անհոգ, անկուլտուրական և, առավել ևս, հակակուլտուրականորեն տրամադրված, պորտաբույծ և մոլեռանդ թուրքական կաստային Եվրոպայում տեղ չպետք է լինի, և դեռ ավելին, նա ոչ մի իրավունք չունի իշխել իրենից անհամեմատ ավելի կուլտուրական և առաջադիմությանը ավելի ընդունակ ժողովուրդների վրա»[17]։ 1915 թ. փետրվարին, մեկնաբանելով Սան-Ֆրանցիսկոյում համաշխարհային ցուցահանդեսի բացման մասին հաղորդագրությունը, «որտեղ ներկայացված են մարդկության մտքի և մշակույթի վերջին արդյունքները», Պոպովիչը ոչնչացնող և թունոտ բնութագիր է տալիս Թուրքիային. «Թուրքիան ուղարկել է մի հոյակապ դաշույն, ամբողջապես ադամանդների և արյան մեջ։ Դա գլուխ կտրելու համար ամենակատարյալ միջոց է։ Դրանում համոզվեցին հայերը՝ 1896-ին, մակեդոնացիները՝ 1903-ին, ալբանացիները՝ 1910-ին, հույները Փոքր Ասիայում՝ այս տարի։ Մի հարվածով կարելի է կտրել ադամախնձորը, և վզի ողները»[18]։

1914 թ. «Բորբա» ամսագրում հրապարակվում է սերբ սոցիալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդներից մեկի, հետագայում ստալինյան ռեժիմի կողմից ռեպրեսիայի ենթարկված Ֆիլիպ Ֆիլիպովիչի (1878—1938) հոդվածը՝ «Պայքար Փոքր Ասիայի շուրջ» վերնագրով։ Հոդվածում, որը գրվել էր առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուց մի քանի ամիս առաջ, քննարկվում էին Գերմանիայի քաղաքական շահերը Փոքր Ասիայում Բաղդադի երկաթուղու կառուցման կապակցությամբ և դրա պատճառով ծագած գերմանա-ռուսական հակասությունները։ Հոդվածագիրը կանխագուշակեց Փոքր Ասիայի համար Գերմանիայի և Ռուսաստանի միջև պատերազմի անխուսափելիությունը։ Ֆիլիպովիչի կարծիքով, այս ամենը կհանդեցնի Հայկական հարցի արտակարգ սրմանը և դժբախտություն կբերի հայ ժողովրդին։ Սերբ սոցիալիստի կանխագուշակումը իրականացավ ընդամենը մի քանի ամիս անց[19]։

1916 թ. ապրիլի 9-ին Փարիզի Սորբոնի համալսարանում տեղի ունեցած «Ֆրանսիացիների և օտարերկրացիների մերձեցման» հավաքույթին՝ ի նպաստ Հայկական հարցի և հայ ժողովրդի, ներկա էին, ի թիվս այլոց, նաև Սերբիայի ներկայացուցիչները[20]։ 1917 թ. հոկտեմբերին հրապարակված սերբ սոցիալ-դեմոկրատական կուսակցության հուշագրում Հայկական հարցի վերաբերյալ խոսվում էր հետևյալը. «Հայաստանին կապում են Թուրքիայի

---

16 Борба, 1910, бр. 1, с. 29—30.

17 Д. Попови ћ. Сабрана дела. Кн. 2. Београд, 1985, с. 251—252.

18 Նույն տեղում, հ. 3, էջ 505։

19 Борба, 1914, кн. 7, бр. 6—7, с. 206—213, 251—255.

20 «Արարատ», 1916, № 5—6, էջ 368—369։

հետ միայն արյան ծովու. անմեղ մարդկանց սպանությունները և հուշերը սարսափների մասին։ Այդ աշխույժ, եռանդուն, քաղաքակիրթ և համակրելի ժողովուրդը պետք է գեթ ազատվի թուրքական բարբարոսությունից։ Հայաստանը պետք է դառնա անկախ պետություն կամ, ինչը ավելի լավ է, միանա Ռուսական հանրապետությանը, որպես ֆեդերացիայի անդամ հավասար իրավունքներով»[21]։ Սերը սոցիալ-դեմոկրատների կարծիքով, միայն բոլոր հարստահարված ժողովուրդների միացյալ պայքարը ազգային և հասարակական խարականության դեմ կարող է բերել աղատության նվաճման։

АРМЯНСКИЙ ВОПРОС В СЕРБСКОЙ ПЕРИОДИЧЕСКОЙ ПЕЧАТИ
(Конец XIX—начало XX века)

А. А. ОВАКИМЯН

Резюме

В конце XIX—начале XX в. сербская общественная мысль широко обсуждала положение армянского народа в Османской Турции и Армянский вопрос, объединяя освободительные устремления армян с чаяниями балканских славян, еще находящихся под турецким гнетом. Одним из первых в сербской действительности справедливого разрешения Армянского вопроса требовал крупный национальный деятель, писатель В. Пелагич. Резня армян в Турции в 1894—1896, 1909 гг. вызвала многочисленные протесты и сочувственные отклики в сербской и черногорской периодической печати. В защиту прав армянского народа выступили лидеры сербской социал-демократической партии Д. Туцович, Д. Попович, Ф. Филиповнч. В меморандуме партии (октябрь 1917 г.) содержалось требование об освобождении Армении и создании независимого армянского государства.

---

[21] Д. Попович. Сабрана дела. Кн. 4. Београд, 1986, с. 64.